1145. ԲԵԿՈՐԻ վրա.

եւ ամենայն ժառանգաւորաց

Հրատ. «Էջմիածին», 1963, Գ, 55:

Ծանոթ. Այս և հայերեն ու վրացատառ մի շարք արձանագրությունների մնացորդների հնագույն կոթողների բեկորներ հայտնաբերել է հնագետ Հովսեփ Եղիազարյանը 1939-1940 թթ. Կողբ գյուղի տաճարի պեղումների ընթացքում:

ԴՈՎԵՂ

Գյուղից 4 կմ հարավ, անտառապատ լեռնալանջին, շինված է Դվեղա Ս. Սարգիս վանքը: Հնուց մնացել է անտաշ քարերով և թաղածածկ մի մատուռ, որին կից 1845-1849 թվերին, համաձայն արձանագրության շինվել է սրբատաշ քարերով մի փոքր եկեղեցի, հավանաբար հին հիմնապատերի վրա. գլխին գմբեթի փոխարեն շինված է զանգակատուն: Բակում էլ կան նորաշեն սենյակ-օթևաններ՝ ուխտավորների համար:

Նորաշեն եկեղեցու արևմտյան պատի խորշերի մեջ արտաքուստ ագուցվել են երկու փոքր, սպիտակավուն քարից շինված գեղաքանդակ խաչքարեր՝ արձանագրություններով:

1146. ԽԱՉՔԱՐ. ագուցված հարավային խորշի մեջ. քիվին, ճակատին և թևերի շուրջը, 5 տող.



ՄԲ ԽԱՉՍ ԲԱՐԵ[ԽԱՒՍ Է] ՏՆՏ[Ե]Ս ՍԱՌԻԿ[Ի]Ն:
ՀՐԸՇՏԱԿ ԳԱԲՐ[Ի]ԵԼԻ ԱՍԵՏԻՔՆ
ՄԱՐԻԱՄՈՒՆ ՅԻ ՔԻ
Ի ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652):
ԿԱՉ[ՄՈ]Ղ ԽԱՉ[Ա]ՏՈ[Ի]Ր:

Ծանոթ. Տնտեսի առկայությունը վկայում է, որ տեղում գոյություն է ունեցել մարդաշատ միաբանություն:

1147. ԽԱՉՔԱՐ. ագուցված հյուսիսային խորշի մեջ, նախորդից ձախ, նույնպես ավետման տեսարանով, չկա բարեխոսողի անունը, 3 տող.



ՄԲ ԽԱՉՍ ԲԱ[ՐԵԽԱՒՍ] ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652):
ՀՐ[Ե]ՇՏ[ԱԿ ԳԱԲ]
[ՐԻԵԼԻ ԱՍԵ]ՏԻՔՆ Մ[ԱՐԻԱՄՈՒՆ]:

Ծանոթ. Այս խաչքարը նույնպես խաչատուր կազմողի ձեռագործն է՝ կրկնվող պատկերաքանդակներով և համապատասխան մակագրություններով:

1148. ՄԱՏՈՒՌ. հարավային պատին, արտաքուստ, արևի ժամացույցի մոտ, 5 տող.

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԳՐԻԳՈՐ . . . . .
ՔԱՀԱՆԱՅ ԱՅ, ՇԻՆԵՑԻ ԶՄ[ԱՏՈՒՌՍ Բ]-
ԱԶՈՒՄ ԱԵԽԱՏՈՒԹ[ԵԱՄ]Բ: ՅԻՇ[ԵՑԷՔ Զ]-
ԳՐԻԳ[ՈՐ], ՈՐՔ ԱՂԱՒԹԷՔ [ԱՍԱՑԷՔ]
ԱԾ ՈՂՈՐՄԻ ԳՐ[Ի]ԳՈՐՈ ԵՒ ԾՆՈՂԱՑ
ԻՒՐՈՑ: ԱՄԷՆ:

ԿԱՄԱԻՆ ԱՅ ԳՐԻԳՈՐ
ՔԱՀԱՆԱՅ ԱՅՅԻՆԵՑԻԶՄ
ԱԶՈՒՄԱՂԽԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳՐԻԳ ՈՐՔԱՂԱԹԷՔ
ԱԾՈՂՈՐՄԻԳՐԳՈՐՈԵԾՆՈՂԱՅԻՒՐՈՅԱՄԷՆ

Ծանոթ. Արձանագրությունը թվագրված չէ: Մատուռի հնագույն շինության վկայագիրն է: Առաջին տողի վերջնամասի վնասվածության պատճառով անհնար է պարզել Գրիգորի ով լինելը և շինությանն ունեցած առնչությունը: Երկրորդ տողում նշվում է, որ մատուռը շինողը եղել է քահանա: Այդ քահանան նույն ինքը՝ Գրիգո՞րն է, թե՞ նրա որդին, հայրը կամ եղբայրը՝ անհնար է պարզել:

1149. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ. դռան ճակատին.

«Ողորմութեամբն Աստուծոյ շինեցաւ եկեղեցիս յանուն սրբոյն Սարգսի տրովք բարեպաշտից, ջանիւք և վերակացութեամբ տփխիսեցի Եսայեան Նուրենց, զոր յիշատակէ Տէր յաւուրն վերջին: Հիմնարկեցաւ ի 1845 և աւարտեցաւ 1849 ամի Տեառն»:

Հրատ. Բարխուդարյանց, 383:

Ծանոթ. Լ. Բարսեղյանի հավաքածուում անունը կարդացվում է *Եսայեայ Նուրենց:*

1150. Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑԻ. հարավային կամարի վրա.

Շինեցաւ յատակս ՍԲ սեղանոյս արդեամբ Խ[ա]չ[ա]տ[ու]ր եւ Դարչօ Հախվերտեանցի:

Հրատ. Բարխուդարյանց, 383:

Ծանոթ. Խոսքը վերաբերում է XIX դ. կատարված նորոգություններին: Ի դեպ, եկեղեցին և սրահը վերանորոգվել են նաև 12 տարի առաջ՝ Հայաստանի հուշարձանների պահպանության ընկերության միջոցներով՝ ռոտոնդայի սյուների վրա կան XIX դ. նվիրատվական արձանագրություններ: Այնպես որ անտառում թաքնված, աչքից հեռու այս մենաստանը գործել է մինչ նոր ժամանակները:

1151. ԽԱՉՔԱՐ. Դովեղից 6 կմ հյուսիս-արևելք, «Սրիգեղ» գյուղատեղի գերեզմանոցում.

ԽԱՉԱՏՈՒՐ ԿԱԶՄՈՂ:
ԹՎ[ԻՆ] ՌՃԱ (1652):

ՀՊՎԱ

Ծանոթ. Բեղմնավոր վարպետի այս գործի վրա ևս հայտնի պատկերաշարն է: Հավանաբար արձանագրությունը լրիվ չի ընդօրինակված: